



USAID
FROM THE AMERICAN PEOPLE



Շահումյան հրապարակ, Երևան | Նկարը՝ Ծրագրի թիմ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Ջրային ոլորտի քաղաքա-տնտեսական վերլուծության

*ԱՄՆ ՄՁԳ/Հայաստանի «Ջրային ռեսուրսների կառավարման
բարելավում» ծրագիր*

Սույն վերլուծությունը հիմնված է Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Յակոբեան բնապահպանական կենտրոնի կողմից իրականացված հետազոտության վրա, որը հանձնարարվել է «Դելոյթ Բոնասայթինգի» կողմից՝ ԱՄՆ ՄՁԳ/Հայաստանի «Ջրային ռեսուրսների կառավարման բարելավում» ծրագրի համար: Այն հնարավոր է դարձել ամերիկյան ժողովրդի աջակցությամբ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄՁԳ) միջոցով: Այստեղ արտահայտված տեսակետները և ներկայացված բովանդակությունը միմիայն հեղինակներին են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄՁԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ԱԿՆԱՐԿ

Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալությունը (ԱՄՆ ՄԶԳ) համագործակցում է Հայաստանի կառավարության և այլ հիմնական շահակիրների հետ՝ իրականացնելու 2022 թվականից սկսված «Հայաստանի ջրային ռեսուրսների կառավարման բարելավում» հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր): Հաջող իրականացման հավանականությունն ավելացնելու նպատակով Ծրագիրը պատրաստել է Հայաստանի ջրային ոլորտի համապատասխան խմբերի շահերի ու փոխազդեցությունների Քաղաքա-տնտեսական վերլուծություն (ՔՏՎ): ՔՏՎ-ի գլխավոր հարցն է՝ «Ինչպե՞ս է Հայաստանի քաղաքական և սոցիալ-տնտեսական համատեքստը հնարավորություն ընձեռում կամ սահմանափակում երկրում ջրային ռեսուրսների կառավարման բարելավմանն ուղղված ջանքերը»: Ակնկալվող բարեփոխումները պետք է ապահովեն ջրի հավասար հասանելիություն և ավելի բարձր տնտեսական աճ, միաժամանակ պահպանելով համապատասխան բնապահպանական հոսքերը և ապահովելով ջրի պատշաճ որակը, ներկա և ապագա սերունդների համար երկրի քաղցրահամ ջրային ռեսուրսների կայունությունն ապահովելու նպատակով:

ՀԱՅԱՑՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՋՐԱՅԻՆ ՈԼՈՐՏԻՆ

Ադրբեջանի, Վրաստանի, Իրանի և Թուրքիայի հետ միասին Հայաստանը գտնվում է Քուռ¹ - Արաքս գետավազանում: Հայաստանից ջուրը դեպի Քուռ է հոսում երկու տարբեր ճանապարհներով: Հայաստանի մակերևութային արտահոսքի առյուծի բաժինը (մոտ 76%) բաժին է ընկնում Արաքս գետին, որն ի վերջո Ադրբեջանում թափվում է Քուռ գետը: Հայաստանից արտահոսքի մնացած 24%-ը Վրաստանի և Ադրբեջանի տարածքով հոսում է դեպի հյուսիս՝ դեպի Քուռի վտակներ:

Հայաստանը հարուստ է ջրային ռեսուրսներով, ինչպես և Հարավային Կովկասի մյուս երկրները: Վերականգնվող ջրային ռեսուրսների բազմամյա միջինով Հայաստանը զգալիորեն գերազանցում է ջրի սակավությունը ցուցադրող Ֆոլկենմարկի ցուցանիշը՝ (1,700 մ³ մարդ/տարի), այն կազմում է մոտավորապես 2,600 մ³ մարդ/տարի: Չնայած դրան՝ **Հայաստանը համարվում է ջրային սթրեսի ծայրահեղ բարձր մակարդակ ունեցող երկիր** ջրի չափից ավելի օգտագործման պատճառով՝ գրեթե 40% ջրի շահագործման ցուցիչով (տարեկան վերականգնվող ջրի օգտագործվող մասնաբաժինը):

Գյուղատնտեսության ոլորտը (ներառյալ ձկնաբուծությունը) երկրի ամենախոշոր ջրօգտագործողն է բազմամյա միջինով այս ոլորտում այն կազմում է ընդհանուր ջրօգտագործման մոտավորապես **87%-ը**:

Արդյունաբերության ոլորտը (օրինակ՝ հանքարդյունաբերություն և մետաղագործություն, էներգետիկա և սննդի վերամշակում) օգտագործում է մոտավորապես 7%-ը, իսկ խմելու և կենցաղային ջրօգտագործումը կազմում է մոտավորապես 6%-ը:

Հայաստանի ջրային ռեսուրսները խիստ խոցելի են կլիմայի փոփոխության նկատմամբ. կանխատեսվում է, որ մինչև 2050 թ. երկիրը տաքանալու է մոտ 2°C -ով, մինչդեռ տեղումների քանակը լինելու է փոփոխական՝ ավելի երկար չոր եղանակներով, ուժեղ փոթորիկներով և ավելի չոր ամառներով: Ջրի

¹ Հիմք է ընդունվում որոշ իրավա-քաղաքական փաստաթղթերում գետի անվանման գրելաձևի հետևյալ տարբերակը

անապահովության աճը կազդի նաև սննդի և էներգիայի արտադրության և ընդհանուր տնտեսական աճի վրա: Համաձայն Կլիմայի փոփոխության մասին Հայաստանի չորրորդ ազգային հաղորդագրության (2020), կանխատեսվում է, որ երկրի ջրային ռեսուրսները զգալիորեն կնվազեն սպասվող կլիմայական փոփոխությունների արդյունքում: Մասնավորապես, կանխատեսվում է, որ մինչև 2100 թվականը գետերի հոսքը կնվազի մինչև 39 տոկոսով: Մինչև 2040 թվականը գետի ներհոսքը դեպի Սևանա լիճ կնվազի 12 տոկոսով, և մինչև 2100 թվականը՝ 34 տոկոսով՝ ստեղծելով տարբեր աստիճանական ազդեցություններ տնտեսության տարբեր ճյուղերի վրա:

Հայաստանն ունի **խորհրդային ժառանգություն** ջրային ոլորտի բոլոր ասպեկտներում՝ ներառյալ հնացած, չափից դուրս մեծ և էներգատար ոռոգման ենթակառուցվածքները, որոնք գտնվում են անմխիթար վիճակում: Քաղաքային և արդյունաբերական ջրամատակարարումը և ջրահեռացումը նույնպես խնդիրներ ունեն: Խմելու ջրի բաշխման կորուստները, օրինակ, կազմում են մոտ 70%: Խորհրդային միության դրական ժառանգությունը խոշոր քաղաքներում քաղաքային կեղտաջրերի և հեղեղաջրերի ջրահեռացման համակարգերի առկայությունն է, որտեղ բնակելի և առևտրային/վարչական շենքերը միացված են կենտրոնացված կոյուղուն: Ցավոք, կեղտաջրերի մաքրման կայաններից շատերը անկախությունից ի վեր չեն գործել, իսկ գործողները միայն «մեխանիկական» մաքրում են իրականացնում:

Քուր-Արաքս գետավազանի և նրա տարածքում գտնվող երկրների քարտեզ



Աղբյուր՝ ՀԱՀ Ցակրեան բնապահպանական կենտրոն, Հայաստանի ամերիկյան համալսարան (ՀԱՀ)՝ Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության (ՀՕԿ) Համաշխարհային արտահոսքի տվյալների կենտրոնի (ՀԱՏԿ) տվյալների բազայի օգտագործմամբ


Հայաստանի ջրամբարների ընդհանուր ծավալը կազմում է մոտ 1,12 մլրդ մ³՝ ինչպես և խորհրդային ժամանակաշրջանի վերջում: Նոր ջրամբարները գտնվում են պլանավորման և շինարարության տարբեր փուլերում: Ջրամբարները հիմնականում օգտագործվում են ոռոգման և հիդրոէներգիայի

արտադրության համար: Չնչին քանակություն է օգտագործվում արդյունաբերական գործունեության համար: Ի տարբերություն Հարավային Կովկասի մյուս երկրների, Հայաստանն ունի ավելի քիչ ջրամբարներ, ավելի փոքր ընդհանուր ջրամբարային հզորություն, ավելի փոքր ջրամբարի միջին հզորություն և մեկ շնչին բաժին ընկնող ավելի փոքր ջրամբարի տարողունակություն:

ՋՐԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈՒՄՈՒՄՆԵՐ

Ջրային ոլորտի հետխորհրդային բարեփոխումների 3 փուլ կարելի է առանձնացնել: Համաշխարհային բանկի նախաձեռնությամբ և ԱՄՆ ՄՁԳ-ի լիակատար աջակցությամբ առաջին փուլի (2000-ականների սկիզբ) արդյունքում մշակվեց Հայաստանի ջրային օրենսգիրքը և ՀՀ օրենքները «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» և «Ջրի ազգային ծրագրի մասին»: Ներդրվել են ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման (ՋՌՀԿ) և Ջրավազանային կառավարման հայեցակարգերն ու սկզբունքները՝ գնագոյացման և ջրային ռեսուրսների կառավարման տնտեսական գործիքների հետ մեկտեղ: Բարեփոխումների երկրորդ փուլը (2000-ականների վերջ) ուղղված էր ջրային ռեսուրսների ապակենտրոնացված կառավարման ավելի մանրամասն շրջանակի մշակմանը: Ամենաարդիական փուլը նշանավորվում է 2017 թ. Եվրամիություն (ԵՄ)-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) ստորագրմամբ: ՀԸԳՀ-ի շրջանակներում Հայաստանը հստակ պարտավորություններ է ստանձնել մինչև 2026 թվականը իր օրենսդրությունը ԵՄ օրենսդրության՝ ներառյալ գետավազանային կառավարման մոտեցումը սահմանող Ջրի շրջանակային դիրեկտիվի (ՋԾԴ) հետ ներդաշնակեցնելու ուղղությամբ:

Հայաստանի ջրային ոլորտի ներկայիս հաստատությունների շրջանակը



Աղբյուր՝ ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոն, դեկտեմբեր 2023 թ.

Նշում. (*) Այս անվանումը կրճատ տարբերակն է ՏԿԵՆ Տարածքային (կապիտալ) ծրագրերի և կոշտ թափոնների կառավարման վարչություն համար, որը ներկայումս դեկավարում է տիկին Նարինե Ավետյանը: (**) Ազգային ժողովը (ԱԺ) նաև իրավասու է ստեղծել քննիչ հանձնաժողովներ, որոնք կգործեն ժամանակավոր հիմունքներով և հատուկ շրջանակներով: Օրինակ՝ ԱԺ-ն կարող է ստեղծել ջրային բարեփոխումների Հարցերով զբաղվող հանձնաժողով և այլն: (***) Ազգային ժողովի հանձնաժողովներն իրավասու են քննարկել նոր օրինագծերը (ինչպես նաև՝ գործող օրենքներում փոփոխությունները), ինչպես նաև՝ հետօրենսդրական քննություն (ՀՕՔ) իրականացնել՝ վերահսկելու կիրարկումը և գնահատելու օրենքների ազդեցությունը (ներառյալ ջրային ռեսուրսների կառավարմանը վերաբերող օրենքները):

ՋՐԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հայաստանն ունի ջրային ռեսուրսների կառավարման համեմատաբար բարդ կառուցվածք: Շրջակա միջավայրի նախարարությունը (ՇՄՆ) առանցքային դեր է խաղում երկրում ջրային ռեսուրսների ընդհանուր կառավարման, քաղաքականության և ռազմավարության մշակման, ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման, ջրային ռեսուրսների որակի և քանակի մշտադիտարկման և երկրի 6 ջրավազանային կառավարման տարածքների՝ երկրում ջրային տնտեսության ապակենտրոնացված միավորների վերահսկողության գործում:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) Ջրային կոմիտեն կառավարում է խմելու ջրի, ջրահեռացման և ոռոգման պետական սեփականություն հանդիսացող ջրային ենթակառուցվածքները: Խմելու ջրի համար ՏԿԵՆ-ը վարձակալության պայմանագիր ունի «Վեոլիա Ջուր» ՓԲԸ մասնավոր ընկերության հետ մինչև 2031 թվականը, որը խմելու ջուր է մատակարարում հիմնական քաղաքներին և որոշ գյուղական բնակավայրերին: Այդուհանդերձ՝ 579 բնակավայրեր (երկրի բնակչության մոտ 23%-ը) չեն սպասարկվում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից՝ բաշխիչ ենթակառուցվածքների բացակայության պատճառով: Ոռոգման ջրի համար ՏԿԵՆ-ը պայմանագիր է կնքել «Ջրառ» ՓԲԸ-ի՝ 100%-ով պետությանը պատկանող ընկերության հետ, որը պահպանում է ոռոգման բաշխման ենթակառուցվածքը և ջուրը բաշխում է ֆերմերներին Ջրօգտագործողների ընկերությունների (ՋՕԸ) միջոցով: ՋՕԸ-ները ֆերմերների անկախ միավորում են:


ՋՐԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՅԵՐԸ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

ՔՏՎ-ն բացահայտեց հետևյալ **ութ բացերն ու մարտահրավերները Հայաստանի ջրային ոլորտում**: Ոլորտի կառավարումը բարելավելու համար ավելի մեծ տնտեսական աճի և կայունության համար այս բացերն ու մարտահրավերները պետք է լուծվեն:

1. Ռազմավարության բացակայություն և քաղաքականության անբավարար հետևողականություն

Ներկայում Հայաստանը չունի ջրային ոլորտի ռազմավարություն: Որպես ռազմավարություն հանդես է եկել «Ջրի ազգային ծրագրի» մասին օրենքի իրականացման միջոցառումների երկարաժամկետ ծրագիրը, որն ավարտվել է 2021 թվականին: Փորձագետները, մասնավորապես, կարևորել են այլ ոլորտային քաղաքականությունների հետ համահունչ ռազմավարություն ունենալու կարևորությունը, օրինակ՝ գյուղատնտեսություն, ձկնաբուծություն, քաղաքաշինություն և շինարարություն, հանքարդյունաբերություն, էներգետիկա և այլն: Ռազմավարության բացակայությունը դուռ է բացում ջրային ռեսուրսների ոչ ճիշտ բաշխման, ինչպես նաև ջրային ենթակառուցվածքներում ներդրումները պոտենցիալ անարդյունավետ օգտագործելու կամ վատնելու համար: Ջրային ոլորտի համապարփակ քաղաքականության մշակումը համահունչ է ոլորտային զարգացման տարբեր ակնկալիքներին, բայց Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարմանը (ՋՌՀԿ) բավարարելը հեշտ չէ և արդյունավետ արդյունքներ ապահովելու համար պետք է հաղթահարել ինստիտուցիոնալ և քաղաքական խոչընդոտները:

Կենտրոնացված ջրամատակարարմամբ և համայնքի կողմից ջրամատակարարման ծառայություն ստացող բնակավայրերը՝ Հայաստանում



Աղբյուր՝ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտե (2022 թ.). քարտեզը պատրաստեց Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Յակոբեան բնապահպանական կենտրոնը

2. Հատվածական կառավարում և ոչ պատշաճ ապակենտրոնացում

Հայաստանն ունի ջրային ռեսուրսների կառավարման ինստիտուցիոնալ բարդ համակարգ, որը հանգեցնում է ոլորտում առկա մարտահրավերների և բացերի: Օրինակ, ՇՄՆ և ՏԿԵՆ Ջրային կոմիտեի միջև պարտականությունների բաշխումը հանգեցնում է նրան, որ առաջինը հետապնդում է Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման նպատակները, մինչդեռ վերջինս կենտրոնանում է ջրի հասանելիության և ենթակառուցվածքների զարգացման խնդիրների վրա: Այս երկու մարմինների ավելի սերտ համագործակցությունը կհանգեցնի ավելի բարենպաստ արդյունքների: Ջրային ոլորտի մյուս մարտահրավերը Հայաստանի օրենսդրական և միջազգային պարտավորությունների կատարումն է, որոնք նախատեսում են ապակենտրոնացված կառավարման հզոր բաղադրիչ, որի համար կպահանջվի քաղաքական կամք և ոլորտի մարդկային կարողությունների շարունակական հզորացում:

3. Տնտեսական գործիքների անարդյունավետ օգտագործում

Հայաստանի օրենսդրությունն առաջարկում է մի քանի տնտեսական գործիքներ երկրի ջրային ռեսուրսների կառավարման համար: Դրանք ներառում են ջրառի վճարներ, ջրի աղտոտման, շրջակա միջավայրի վնասի և խախտումների համար տուգանքներ և հարկեր, և սուբսիդավորման ծրագրեր՝ խրախուսելու տարբեր տնտեսական սխեմաներ ջրի արդյունավետ օգտագործման համար: Ըստ երևույթին, նպատակը եղել է «վճարում է աղտոտողը», «վճարում է շահառուն» և «ծախսերի ամբողջական փոխհատուցում» սկզբունքները Հայաստանի ջրային կառավարման ռեժիմում ներդնելը: Որպես այդպիսին, տնտեսական գործիքներն ունեն և՛ կարգավորող, և՛ հարկաբյուջետային գործառույթ: Այս գործիքները դեռ պետք է բերեն իրենց ենթադրյալ արդյունքները ներդրումից երկու տասնամյակ անց: Ջրի օգտագործման արդյունավետության և ջրի որակի բարելավման զգալի աճ չի գրանցվել: Կարծիքներ կան, որ հիմնական պատճառը տուրքերի, հարկերի և տուգանքների համար սահմանված զրոյական կամ ցածր դրույքաչափերն են: Բացի այդ, ավելի քան երկու տասնամյակ շարունակ իրար հաջորդող կառավարությունները մեծ սուբսիդիաներ են ուղղել ջրային ոլորտին: Կառավարությունը կարող է կիրառել մի քանի գործիքներ՝ որոշելու լավագույն մոտեցումը ոլորտում առաջընթաց ապահովելու համար: Դրանք ներառում են աստիճանական սակագներ, ջրի բաշխման բարեփոխում, մասնավորապես, ռոզգման, սոցիոլոգիական հետազոտությունների և գործիքների օգտագործում՝ գնային քաղաքականության լավագույն ռազմավարական մոտեցումները բացահայտելու համար և այլն:

4. Ջրի որակի օրակարգի բացակայություն

Հայաստանում խիստ բացակայում են կեղտաջրերի մաքրման հնարավորությունները, և, ըստ էության, քաղաքական ուշադրությունն այս հարցում նույնպես բացակայում է: Կարողությունների և քաղաքական ուշադրության այս վակուումը ընդգրկում է քաղաքային, գյուղատնտեսական և արդյունաբերական կեղտաջրերը: Կեղտաջրերի ազդեցության տակ խմելու ջրի ռիսկը տարբեր է: Համայնքները փորձում են խմելու ջուրը ստանալ իրենց ծանոթ աղտոտման կետերից վերև գտնվող աղբյուրներից: «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող համայնքները ստանում են ջուր, որի որակը ակնկալվում է, որ ստուգվի օրական մի քանի անգամ: ՀՀ կառավարության պարտավորությունները ջրի որակի (ներառյալ կեղտաջրերի մաքրման) բարելավման վերաբերյալ ուրվագծված են ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներից թիվ 6-ում, որի թիրախներից է մինչև 2030 թվականը մաքրել երկրի կեղտաջրերի 50%-ը: Նաև ՀԸԳՀ-ն երկիրը մոտեցնում է ջրի և կեղտաջրերի վերաբերյալ եվրոպական ստանդարտների և կանոնակարգերի ընդունմանը:

5. ՀՀ օրենքների և միջազգային պայմանագրերի պահանջների ոչ պատշաճ ապահովում

Օրենքներին և միջազգային ու այլ պայմանագրերին համապատասխանությունն ապահովելու համար կան տարբեր մարմիններ, որոնք պատասխանատու են ջրամատակարարման տարբեր գործառույթների համար: Հանրային ծառայությունների կարգավորման հանձնաժողովը (ՀՕԿՀ) հետևում է իրավական պարտավորությունների կատարմանը, ներառյալ գնագոյացումը, ջրի անխափան մատակարարումը և այլն: Խախտումների դեպքում գանձվում են տուգանքներ: Պայմանագրերի խախտումների որոշ դեպքերում Ջրային կոմիտեն ևս կարող է միջամտել: ՀՕԿՀ-ի տեխնիկական աուդիտորները պարբերաբար ստուգում են պայմանագրային պարտավորությունների կատարումը: Խախտումների համար տուգանքները մի փոքր ավելացել են վերջին տարիներին, սակայն մնում են բավական ցածր և չեն հանդիսանում զսպող գործոն: Խմելու ջրի որակի վերահսկողության իրավունքը վերապահված է ՀՀ Առողջապահության նախարարությանը (ԱՆ), որը սահմանում է խմելու ջրի որակի նորմերը, որոնք

ջրամատակարարման ծառայություններ մատուցողները պարտավոր են պահպանել: ԱՆ-ն պարբերաբար ստուգումներ է իրականացնում ծառայություններ մատուցողների ջրի որակի ապահովման գործընթացներում՝ պահովելու դրանց համապատասխանությունը գործող նորմերին և ստանդարտներին: Ջրօգտագործման թույլտվությունների պայմաններին համապատասխանության ստուգումներն իրականացնում է ՀՀ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը (ԲԸՏՄ): Այս պայմանները ներառում են ինչպես ջրառի քանակությունը, այնպես էլ արտանետվող կեղտաջրերի որակը: ԲԸՏՄ-ն հիմնականում ստուգում է արդյունաբերական ջրօգտագործողների կեղտաջրերի որակը: Այն չի ստուգում խմելու/համայնքային և գյուղատնտեսական ջրօգտագործողների կեղտաջրերի որակը: ԲԸՏՄ-ի աշխատանքի համար կան լուրջ սահմանափակումներ՝ ներառյալ մարդկային կարողությունների սահմանափակումները, ստուգումների սահմանափակումը կառավարության կողմից հաստատված ստուգաթերթով և չհայտարարված ստուգումներ իրականացնելու համար առկա իրավական խոչընդոտները:

6. Ջրային ռեսուրսների վերաբերյալ առկա տվյալների ոչ բավարար վերլուծական կարողություններ

Հայաստանում ջրի քանակի և որակի վերաբերյալ բավականաչափ տվյալներ են հավաքագրվում, այդ թվում՝ ՀՀ Վիճակագրական կոմիտեի կողմից: Կարծես թե համաձայնությունը կայանում է նրանում, որ այս տվյալների ճշգրտությունը պետք է բարելավվի՝ ընդունելով ավելի լավ մեթոդներ և ավելացնելով ավելի շատ մշտադիտարկման կայաններ: Հարկավոր է նաև ինտեգրել որոշակիորեն մասնատված տվյալների ենթակառուցվածքը: Վերջին մի քանի տարիների ընթացքում կառավարությունը զգալի միջոցներ է հատկացրել այն հաստատություններին, որոնք հավաքում են ջրի հետ կապված տվյալներ: Փորձագետների կարծիքով, սակայն, տվյալները լավ չեն ինտեգրված և լավ չեն ներդրված որոշումների կայացման գործընթացում: Հանրային կառավարման հաստատություններում ակնհայտորեն բացակայում են փորձագիտական կարողությունները՝ վերլուծելու ջրային ռեսուրսների վերաբերյալ տվյալները և համապատասխան առաջարկություններ անել փաստահենք որոշումների կայացման համար:

7. Ջրային և կլիմայական դիվանագիտության կարողությունների բացակայություն

Հայաստանը ջրօգտագործման անդրսահմանային պայմանագրեր ունի Թուրքիայի և Իրանի հետ դեռ խորհրդային տարիներից (որոնք դեռևս ուժի մեջ են): Ախուրյանի և Արաքսի ջրային ռեսուրսների քանակի Թուրքիա-Հայաստան համատեղ մշտադիտարկումը հաճախ նշվում է որպես անդրսահմանային ջրային ռեսուրսների հաջող կառավարման փորձ, որտեղ քանակները պարզելու մասին որոշումը փոխանցվում է ինժեներներին՝ առանց որևէ քաղաքական միջամտության: Ըստ բոլոր զեկույցների, այս համակարգը բացառիկ լավ է աշխատել վերջին մի քանի տասնամյակների ընթացքում: Կան նաև ժառանգված պայմանագրեր Ադրբեյջանի և Վրաստանի հետ, որոնք չեն գործում Խորհրդային Միության փլուզումից հետո: Վրաստանի հետ հակվածություն կա նոր համաձայնագրի ընդունման և վերջին փորձի հիման վրա համատեղ մշտադիտարկման հաստատման հարցում, որտեղ երկու կողմերն անցկացրել են ինչպես մակերևութային, այնպես էլ ստորերկրյա ջրային ռեսուրսների համատեղ մշտադիտարկում EU4Environment ծրագրի աջակցությամբ: Կլիմայի և ջրային դիվանագիտության շրջանակներում առավել ընդլայնված տարածաշրջանային ներգրավվածություն, և ի վերջո, ջրավազանների ինտեգրված կառավարում ապահովելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել մեծ ծավալով աշխատանք և կարողությունների զարգացում:

8. Անբավարար հանրային իրազեկվածություն, կրթություն և թափանցիկություն

Չկան ուսումնասիրություններ կամ սոցիալական հարցումներ, որոնք կփորձեն բացահայտել կամ հասկանալ հայաստանյան հասարակության համոզմունքներն ու վերաբերմունքը ջրի խնդիրների շուրջ, օրինակ՝ պահպանման և կայունության, կլիմայի փոփոխության ազդեցության, կեղտաջրերի, անդրսահմանային ջրերի հոսքերի և ջրային ոլորտի առաջնահերթությունները հատկորոշելու վերաբերյալ: Ինչպես շատ երկրներում, ջրի ոլորտի մասին լայն հանրության ըմբռնումը հաճախ սահմանափակվում է նրանց անմիջական ամենօրյա կարիքներով: Պահպանության, կայունության, գերօգտագործման, աղտոտվածության և ջրի վրա կլիմայի փոփոխության ազդեցության մասին տեղեկացվածությունը շատ ցածր է: Առօրյա փորձը ցույց է տալիս, որ ջուրն ընկալվում է որպես «անվերջ» վերականգնվող ռեսուրս: Ընդհանուր առմամբ, հիմքում ընկած է այն համոզմունքը, որ Հայաստանը ջրառատ երկիր է և այդպես էլ կշարունակի մնալ: Ջրի օգտագործման և գնագոյացման քաղաքականության ցանկացած փոփոխություն հանրության կողմից ընկալվում է որպես անհարկի, իսկ քաղաքականություն մշակողների կողմից՝ բարձր ռիսկային: Պետք է ջանքեր գործադրվեն՝ բարձրացնելու հասարակության ըմբռնումը Հայաստանի առջև ծառայող ջրային ոլորտի խնդիրների վերաբերյալ, ներառյալ կլիմայի փոփոխության ակնկալվող ազդեցությունը և Հարավային Կովկասում ջրի աշխարհաքաղաքական համատեքստը: Ջրային ոլորտին առնչվող խնդիրների իրազեկվածությունը բարձրացնելու, քաղաքացու դերը բարձրացնելու և հանրային քննարկումների ու ներգրավվածության համար ճանապարհ հարթելու համար կարևոր է ջրային ոլորտի վերաբերյալ հանրային ըմբռնումը «Հայաստանը ջրառատ երկիր է»-ից փոխել «Հայաստանը ջրային լուրջ մարտահրավերների առջև է կանգնած»-ի:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

1. Հայաստանի ջրային ոլորտի **ռազմավարության մշակում**, համահունչ այլ ոլորտներում վարվող քաղաքականություններին:
2. Առկա **տնտեսական գործիքների արդյունավետ օգտագործում**:
3. Պետական-մասնավոր **ներդրումների ավելացում**, ինչպես նաև մասնավոր հատվածի ներգրավում կլիմայի հարմարվողականության և մեղմացման պլանավորման մեջ:
4. **Անկախ պետական մշտադիտարկման և գնահատման մարմնի ստեղծում**, որը կանոնավոր կերպով աուդիտ կիրականացնի քաղաքականության թիրախների ուղղությամբ կառավարության առաջընթացը:
5. Ջրի կառավարման սկզբունքների **ինտեգրում** քաղաքացիական ծառայողների և բարձր մակարդակի քաղաքականություն մշակողների **կրթության և մասնագիտական վերապատրաստման մեջ**: Զուգահեռ, ջրային և կլիմայական դիվանագիտության կարողությունների ավելացում:
6. **Փաստահեն և մասնակցային կառավարում իրականացնելու** նպատակով, ծախսերի և օգուտների վերլուծության և հասարակագիտական հետազոտական գործիքների ներդրում՝ ոլորտի կարգավորման և գնագոյացման որոշումների վերաբերյալ հանրությանը տեղեկացնելու համար, ինչպես նաև արմատացած տնտեսական շահերով կողմերի ներգրավում՝ ջրային ոլորտի բարեփոխումների կարիքների վերաբերյալ փոխըմբռնում ստեղծելու նպատակով:
7. Ջրային ռեսուրսների վերաբերյալ տվյալների **ինտեգրում** և **վերլուծական կարողությունների հզորացում**:

8. Անցկացնել **հանրային իրազեկվածության արշավներ**, որոնք ուղղված կլինեն ջրային ռեսուրսների վերաբերյալ հանրային ըմբռնման, ինչպես նաև ոլորտի թափանցիկության և հաշվետվողականության մեծացմանը:
9. Պետական գերատեսչությունների կարիքները գնահատել **առավել նպատակային առաջարկությունների** համար, ինչպես նաև նախանշել ավելի խորը տեխնիկական և այլ ուսումնասիրություններ իրականացնելու անհրաժեշտությունը և ոլորտները, ներառյալ **անդրասահմանային ջրային դիվանագիտության** հետ կապված:
10. Դիտարկել «ստեղծագործական» մոտեցումներ, այդ թվում **նոր տեխնոլոգիաների ներդրման և գիտական համայնքի հետ համագործակցության** ինստիտուցիոնալ հնարավորությունները:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ

1. **Ազգային ժողով - Կառավարություն հարցուպատասխանի** ժամանակ՝ ավելի ակտիվ բարձրաձայնել ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ, ներառյալ հաշվարկման մեթոդաբանությունը հստակեցնելու համար ավելի խորը ուսումնասիրությունների անհրաժեշտությունը.
 - Գյուղատնտեսության ոլորտի տարեկան ջրօգտագործումը, հատկապես ֆերմաներում ջրաչափերի համատարած բացակայության պայմաններում:
 - Տարեկան բնապահպանական հոսքերը, հատկապես լեռնային գետերի համար, որոնք տարվա կտրվածքով ունեն ջրային հոսքերի տարբեր մակարդակներ:
 - Տարեկան վերականգնվող ջրային ռեսուրսների երկարաժամկետ միջինը, որը ներկայումս հաշվարկվում է 1961 թվականից առ այսօր առկա թվերի հիման վրա:
2. **Անցկացնել խորհրդարանական լսումներ** ջրային ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ, օրինակ, ջրի միասնական ազգային ռազմավարություն մշակելու անհրաժեշտությունը մի շարք խնդիրների համապարփակ լուծման համար:
3. **Պետական բյուջեի հաստատման** գործընթացի ընթացքում հասցեագրել ոլորտին վերաբերող խնդիրների և բարեփոխումների ընթացքին վերաբերող հարցերը պատկան մարմիններին:
4. Դիտարկել ջրային ոլորտի բարեփոխումների հարցով **քննիչ հանձնաժողովի** ստեղծման նպատակահարմարությունը:
5. Իրականացնել Ջրային ոլորտին վերաբերող առկա օրենքների **հետօրենսդրական վերահսկողություն (ՀՕՎ)** գնահատելու օրենքների կիրառման արդյունավետությունը, հասկանալու թե ի՞նչ չափով են ընդունված օրենքները ծառայում իրենց նպատակներին, և որո՞նք են խոչընդոտող հանգամանքները:
6. Ուժեղացնել խորհրդարանի տրամադրության տակ գտնվող վերահսկողության տարբեր գործիքները և մեխանիզմները՝ հակակշիռների միջոցով գործադիր իշխանությանը քաղաքականապես սահմանափակելու և պատասխանատվության ենթարկելու համար (քաղաքական վերահսկողություն, ֆինանսական վերահսկողություն և այլն):
7. **Ինտեգրել ջրի կառավարման սկզբունքները** քաղաքացիական ծառայողների և բարձր մակարդակի քաղաքականություն մշակողների կրթության և մասնագիտական վերապատրաստման մեջ՝ այդ թվում Ազգային ժողովի պատգամաւորների, օգնականների, հանձնաժողովի էքսպերտների, և Փորձագիտական եւ վերլուծական վարչության աշխատակիցների համար:
8. **Ավելացնել տեղեկատվության թափանցիկությունը և դյուրացնել հասանելիությունը**, այդ թվում ԱԺ կայքում առկա հանձնաժողովների զեկույցների և այլ տեղեկատվության դյուրին տեղորոշումը այցելուների համար (օրինակ՝ Արարատի և Արմավիրի ջրօգտագործման հարցերի քննիչ հանձնաժողովի աշխատանքների զեկույցը):
9. Հաշվի առնել ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի առաջարկությունները՝ Սևանա լճից լրացուցիչ ջրառ թույլատրող օրինագծերը ընդունելուց առաջ:

Վերոնշյալ առաջարկությունները հիմնված են ՔՏՎ արդյունքների վրա: Այս և այլ առաջարկություններին կարելի է ավելի մանրամասն/թիրախային անդրադառնալ ջրային ոլորտի ռազմավարության և գործողությունների ծրագրի մշակման ընթացքում:

Հարցերի կամ առաջարկությունների դեպքում խնդրում ենք գրել ace@ava.am էլ. փոստի հասցեին: